Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2024թ. ապրիլի 4-ի N 94-Ա հրամանի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2023 թվականի

«Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Լիազոր մարմին) հաշվետու տարում իրականացված ներքին աուդիտի վերաբերյալ տարեկան ամփոփ հաշվետվություններ են ներկայացվել Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի թվով 50 մարմինների կողմից (տե՛ս Ցանկ N 1 և Ցանկ N 2), այդ թվում 38 պետական և տարածքային կառավարման մարմինների (այսուհետ՝ ՊՄ) և 12 տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) կողմից:

Ներքին աուդիտ իրականացրած թվով 50 պետական և տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից թվով 32-ում ներքին աուդիտի աշխատանքների իրականացումը արտապատվիրակվել են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված՝ Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպություններին (այսուհետ՝ Կազմակերպություններ), այդ թվում 25 ՊՄ-ներում և 7 ՏԻՄ-երում:

Ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ թվով 38 ՊՄ-ների կողմից Լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների համաձայն թվով 13-ում ներքին աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով, իսկ թվով 25-ում՝ Կազմակերպությունների միջոցով:

Ներքին աուդիտ չի իրականացվել թվով 10 ՊՄ-ներում, ինչը պայմանավորված է ներքին աուդիտի ստորաբաժանումների լուծարված լինելու պարագայում ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով մրցույթներ չկայանալու հանգամանքով կամ ներքին աուդիտի ստորաբաժանումների հաստիքները համալրված չլինելու հանգամանքով:

Ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ թվով 12 ՏԻՄ-երի կողմից Լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների համաձայն թվով 5-ում ներքին աուդիտն

իրականացվել է ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով, իսկ մնացած ՏԻՄ-երում՝ Կազմակերպությունների միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Լիազոր մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով վարվել և ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել են «ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը», «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը» և «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը» (այսուհետ՝ Ցանկեր): Այդ Ցանկերում ներառված տվյալների համաձայն 2023 թվականի տարեսկզբին Ցանկերում ընդգրկված թվով 218 աուդիտորներից թվով 75-ը հանդիսացել են հանրային հատվածի կազմակերպությունների աշխատողներ, իսկ 2023 թվականի ավարտին՝ թվով 258 աուդիտորներից թվով 79-ը:

ՀՀ կառավարության 26.12.2023թ. «ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «Ներքին աուդիտորի որակավորման կարգը և հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար կազմակերպություններին ներկայացվող հիմնական պահանջները հաստատելու մասին» N 176-Ն որոշումը: Համաձայն վերոնշյալ որոշման 2023 թվականի դեկտեմբերի 28-ին հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի «Ներքին աուդիտորի որակավորման շնորհման և շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը, հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար հրավիրված անձանց ներկայացվող հիմնական պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի N 541-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 516-Ն հրամանը:

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 28.12.2023թ. N 516-Ն հրամանով հաստատված նոր կարգի պահանջներով 2023 թվականի ընթացքում չեն իրականացվել ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ և ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորումներ:

Համաձայն վերոնշյալ նոր կարգի ներքին աուդիտորը որակավորումն ստանալու տարվան հաջորդող յուրաքանչյուր երրորդ տարում պետք է անցնի վերապատրաստում, ընդ որում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը որակավորում ստացած ներքին աուդիտորների հաջորդ վերապատրաստման տարին է համարվում 2025 թվականը: Հետևաբար 2023-2024 թվականների ընթացքում չի իրականացվելու ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում:

2022 թվականին կազմակերպվել են թվով 11 շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են թվով 184 որակավորված ներքին աուդիտորներ, ընդ որում թվով 35-ը՝ ներքին աուդիտի ղեկավարի պարտականություններ կատարողներ:

Ստորև գծապատկերում ներկայացված են 2021-2022 թվականների ընթացքում կազմակերպված շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, թեստավորմանը մասնակցած, ինչպես նաև ներքին աուդիտորի որակավորումը դադարեցված աուդիտորների ամփոփ ցուցանիշները:



«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջի

կիրարկման շրջանակներում ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտորի որակավորման կարգի համաձայն՝ 2023 թվականի ընթացքում կազմակերպվել է թվով 7 որակավորման քննություն: Որակավորում ստանալու համար հաշվետու տարվա ընթացքում ստացվել են 70 հայտեր: Նշված ցուցանիշը 2022 թվականի համեմատությամբ ավելացել է 2-ով կամ 2.9%-ով, 2021 թվականի համեմատությամբ՝ նվազել է 4-ով կամ 5.4%-ով:

Քննությանը մասնակցելու համար հրավիրված թվով 70 դիմողներից որակավորման համար սահմանված շեմը հաղթահարել են թվով 34-ը, որոնց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և նրանք ներառվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող՝ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ գլխի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներին համապատասխան «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված, ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում» ընդգրկվելու նպատակով, 2023 թվականի ընթացքում ստացվել է 6 դիմում և բոլորն էլ բավարարվել են, նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և նրանք համապատասխանաբար ընդգրկվել են Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված, ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում:

Նշված ցուցանիշը 2022 թվականի համեմատությամբ ավելացել է 1-ով, իսկ 2021 թվականի համեմատությամբ նվազել է 16-ով:

Այսպիսով, համադրելով ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերում ընդգրկվածության վերաբերյալ վերը նշված դինամիկայի վերլուծության արդյունքները, ստացվում է, որ 2023 թվականի տարեվերջի դրությամբ առկա է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող Ցանկերում ընդգրկված թվով 258 աուդիտոր, որը նախորդ 2022թ. համեմատությամբ ավելացել է 40-ով կամ 18.3%-ով, իսկ 2021թ. համեմատությամբ նվազել է 16-ով կամ 5.8%-ով:

Ստորև գծապատկերում բերված են հանրային հատվածի ներքին աուդիտորի

որակավորում ունեցող և Ցանկերում ընդգրկվածության 2021-2023 թվականների ամփոփ ցուցանիշները:



Հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված աուդիտորների վերաբերյալ 2021-2023 թվականների համապատասխան ցուցանիշների դինամիկան արտացոլված է ստորև ներկայացված գծապատկերում.



2023 թվականին 2021-2022 թվականների համեմատությամբ փոփոխության է

ենթարկվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը: Այսպես՝ 2023 թվականին գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը 2022 թվականի համեմատությամբ ավելացել է 4-ով կամ 5.3%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը պակասել է՝ 10-ով կամ 71.4%-ով, միևնույն ժամանակ 2021 թվականի համեմատությամբ՝ գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը պակասել է 2-ով կամ 2.5%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը՝ 12-ով կամ 75%-ով:

ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2021-2023 թվականների, ունի հետևյալ պատկերը:



ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 83 աուդիտորներից թվով 67-ը հանդիսանում են ՊՄ-ների, իսկ թվով 16-ը՝ ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատողներ: 2023 թվականին 2022 թվականի համեմատությամբ ՊՄ-ների աուդիտորների թիվը պակասել է 5-ով, իսկ ՏԻՄ-երի աուդիտորների թվաքանակը պակասել է 2-ով, իսկ 2021 թվականի

համեմատությամբ՝ ՊՄ-ների աուդիտորների թվաքանակը պակասել է 4-ով, իսկ ՏԻՄ-երի աուդիտորների թվաքանակը պակասել է 10-ով:



2022 թվականին «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկվելու նպատակով ներքին և (կամ) արտաքին աուդիտի գործունեությամբ զբաղվող Կազմակերպություններից ստացվել է 1 հայտ, որը չի բավարարվել: Այսպիսով, 2023 թվականի ընթացքում հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկը չի փոխվել:

Այսպիսով 2023 թվականի տարեվերջին «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկված կազմակերպությունների թիվը 10 է: Նշված ցուցանիշը 2022 թվականների

համեմատությամբ չի փոխվել, իսկ 2021 թվականի համեմատությամբ նվազել է 3-ով:

Հաշվետու տարվա ավարտին՝ ՀՀ հանրային հատվածի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացված ներքին աուդիտի արդյունքների և ներքին աուդիտի աշխատանքների վերաբերյալ ստացված տարեկան ամփոփ հաշվետվությունների, ինչպես նաև հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 3-րդ՝ «Ներքին աուդիտի միջավայրի միավորները» աղյուսակի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2023 թվականի ընթացքում պլանավորվել է աուդիտի ենթարկել ՊՄ-ների և ՏԻՄ-երի 3443 միավորից 953-ը կամ 27.7%-ը և 23630 գործառույթից 8272-ը կամ 35%-ը: Նշված ցուցանիշը 2022 թվականի համեմատությամբ աճել է՝ ըստ միավորների 0.4%-ով և ըստ գործառույթների՝ 28.6%-ով, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ համապատասխանաբար 10.7%-ով և 58.1%-ով:

2023 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ-ների և ՏԻՄ-երի 943 միավոր և 8100 գործառույթ: Նշված ցուցանիշը, 2022 թվականի համեմատությամբ ըստ միավորների նվազել է 0.6%-ով և ըստ գործառույթների աճել է 29.6%-ով, իսկ 2021 թվականի համեմատությամբ աճել է համապատասխանաբար 9.9%-ով և 65.2%-ով:

Ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վերոհիշյալ ցուցանիշները ունեն հետևյալ պատկերը.

ՊՄ-ների 2619 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 822-ը կամ միավորների 31.4%-ը և 20180 գործառույթից՝ 7225-ը կամ 35.8%-ը, 2022 թվականին պլանավորված միավորների 34.1%-ի և գործառույթների 40.8%-ի դիմաց, իսկ 2021 թվականին, համապատասխանաբար 34.0%-ի և 42.6%-ի դիմաց:

2023 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ-ների 808 միավոր կամ 30.9% և 7039 գործառույթ կամ 34.9%, 2022 թվականին՝ միավորների 34.4%-ը և գործառույթների 39.7 %-ը, իսկ 2021 թվականին՝ միավորների 34.7%-ը, գործառույթների 39.9%-ը:

Միևնույն ժամանակ ՏԻՄ-երի գծով հաշվետու տարում պլանավորվել է 824 միավորներից աուդիտի ենթարկել 131 միավոր կամ միավորների 15.9%-ը և 3450 գործառույթից՝ 1047-ը կամ 30.3%-ը, 2022 թվականին՝ միավորների 15.7%-ը և գործառույթների 18.1%, 2021 թվականին համապատասխանաբար 20.9%-ը և 16.5%-ը:

Փաստացի աուդիտի է ենթարկվել 135 միավոր կամ դրանց 16.4%-ը և 1061 գործառույթ կամ 30.8%-ը, 2022 թվականի միավորների 14.8%-ի և գործառույթների 17.0%-ի, 2021 թվականի համապատասխանաբար 19.4%-ի և 15.6%-ի դիմաց:

Համադրելով այս ցուցանիշները ստացվում է, որ 2023 թվականի ՊՄ-ների և ՏԻՄ-երի փաստացի կատարողականն ըստ միավորների կազմում է 98.9%, իսկ ըստ գործառույթների՝ 97.9%, 2022 թվականի համապատասխանաբար 100.0%-ի և 97.1%-ի, իսկ 2021 թվականի՝ 99.7%-ի և 93.8%-ի դիմաց:

Փաստացի կատարողականի ցուցանիշը ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետևյալն է.

ՊՄ-ների դեպքում ըստ միավորների 2023 թվականին այն թերակատարվել է՝ կազմելով 98.3%: 2022 և 2021 թվականների համեմատ գերակատարվել է համապատասխանաբար 1.0%-ով և 1.8%-ով, ըստ գործառույթների թերակատարվել է՝ 2023 թվականին՝ 97.4%, 2022 թվականին՝ 97.5%, 2021 թվականին՝ 93.6%.

ՏԻՄ-երի դեպքում ըստ միավորների 2023 թվականին այն 3%-ով գերակատարվել է, 2022 թվականին թերակատարվել է՝ 93.9%, 2021 թվականին՝ 92.8%, ըստ գործառույթների՝ 2023 թվականին՝ նույնպես գերակատարվել է 1.3%-ով, 2022 թվականին թերակատարվել՝ 93.8%, 2021 թվականին՝ 94.5%:

2023 թվականի տարեկան ծրագրով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պլանավորել են իրականացնել 1046 առաջադրանք[1], որը 2022 թվականի համեմատությամբ նվազել է 1-ով կամ 0.1%-ով, իսկ 2021 թվականի համեմատությամբ աճել է 169-ով կամ 19.3%-ով: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2023 թվականին 916 առաջադրանք, 2022 թվականին 908 առաջադրանք, 2021 թվականին 662 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2023 թվականին՝ 130, 2022 թվականին՝ 139, 2021 թվականին՝ 215 առաջադրանքներ:

2023 թվականի տարեկան ծրագրով պլանավորված թվով 1046 առաջադրանքից 977-ը պլանավորվել է որպես աուդիտորական, իսկ 69-ը՝ խորհրդատվական ծառայություն մատուցելու առաջադրանքներ, նույն ցուցանիշները համապատասխանաբար 2022 թվականին կազմել են 971 և 76 , իսկ 2021 թվականին՝ 867 և 10: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2023 թվականին՝ 849 և 67 առաջադրանք, 2022 թվականին՝ 832 և 76 առաջադրանք, 2021 թվականին՝ 659 և 3 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2023 թվականին՝ 128 և 2 առաջադրանք, 2022 թվականին՝ միայն աուդիտորական 139, 2021 թվականին՝ 208 և 7 առաջադրանք:

[1]Առաջադրանքները, կախված աուդիտի տեսակից, կարող են միաժամանակ ընդգրկել միավորներ և գործառույթներ:

Համաձայն տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 5-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը» աղյուսակով ներկայացված տվյալների՝ փաստացի իրականացված առաջադրանքների քանակը 2023 թվականին կազմել է 1260 առաջադրանք, 2022 թվականին՝ 1341 և 2021 թվականին՝ 1108, որը ինչպես 2022 թվականի համեմատությամբ նվազել է 6%-ով, իսկ 2021 թվականի համեմատությամբ աճել է՝ 13.7%-ով: Նշված ցուցանիշը 2023 թվականին ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 1125, 2022 թվականին՝ 1209, 2021 թվականին՝ 865 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2023 թվականին՝ 135, 2022 թվականին՝ 132, 2020 թվականին՝ 243 առաջադրանք:

Համաձայն նույն աղյուսակով ներկայացված տվյալների ՊՄ-ներում և ՏԻՄ-երում 2023 թվականին իրականացվել է լրացուցիչ (ոչ պլանային) թվով 75 աուդիտորական առաջադրանք. գերակատարումը կազմել է 7.7%, 2022 թվականի 12.4%-ի և 2021 թվականի 17.1% դիմաց: 2023 թվականին իրականացված լրացուցիչ թվով 75 աուդիտորական առաջադրանքներից 71-ը իրականացվել են ՊՄ-ներում, իսկ 4-ը ՏԻՄ-երում:

2023 թվականին մատուցվել է լրացուցիչ (ոչ պլանային) 139 խորհրդատվական ծառայություն, համապատասխանաբար 2022 և 2021 թվականներինի 174 և 83 խորհրդատվական ծառայության փոխարեն: Խորհրդատվական ծառայությունները ինչպես 2023 թվականին, այնպես էլ 2021-2022թթ. գերակատարվել են:

Համաձայն 2021 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 4-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների» աղյուսակի ՊՄ-ներում և ՏԻՄ-երում փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքները ըստ աուդիտի տեսակների՝ ունեն ստորև ներկայացված պատկերը.

2023 թվականին ՊՄ-ներում իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակները 2022 թվականի համեմատությամբ նվազել են 129-ով, իսկ 2021 թվականի համեմատությամբ աճել են 275-ով:

Այսպես, համակարգի գնահատման աուդիտի քանակը 2022 թվականի համեմատ ավելացել է 20%-ով, իսկ 2021 թվականի համեմատ՝ 41.3%-ով, ֆինանսական աուդիտի քանակը համապատասխանաբար նվազել է շուրջ 3.7 և 1.8 անգամ, համապատասխանության կամ իրավական աուդիտի քանակը 2022 թվականի համեմատությամբ նվազել է 3.6%-ով, իսկ 2021 թվականի համեմատությամբ աճել է 21.7%-ով,

գնումների աուդիտի քանակը աճել է 16%-ով և 2.1 անգամ, կատարողականի աուդիտի քանակը 2022 թվականի համեմատությամբ նվազել է 30.6%-ով, իսկ 2021 թվականի համեմատ աճել է 6.1 անգամ: 2021-2023 թվականներին տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ չի իրականացվել:

2023 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 232 աուդիտներից՝ 47-ը կամ 20.3%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 184-ը կամ 79.3%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող և 1-ը կամ 0.4%-ը՝ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնման աուդիտն է:

Ստորև գծապատկերում ներկայացված են ՊՄ-ներում փաստացի իրականացրած աուդիտի տեսակների 2021-2023 թվականների ամփոփ ցուցանիշները.



Հաշվետու տարում ՏԻՄ-երում իրականացված աուդիտորական առաջադրանքներում փոփոխությունն ըստ տեսակների 2022 և 2021 թվականների համեմատությամբ ունի հետևյալ պատկերը: Համապատասխանաբար՝ գնումների աուդիտը նվազել է 4.5 անգամ և 11.5

անգամ, կատարողականի աուդիտը նվազել է 47.4%-ով և 41.2%-ով, համակարգի գնահատման աուդիտի քանակը աճել է 16.7%-ով և նվազել 4.5%-ով, ֆինանսական աուդիտի քանակը նվազել է 43,2%-ով և 60.4%-ով, համապատասխանության կամ իրավական աուդիտի քանակը աճել է 2 անգամ և նվազել՝ 32.1%-ով: 2021-2023 թվականների ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ չի իրականացվել:

2023 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 2 աուդիտներից 1-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 1-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնման աուդիտ է: Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնման աուդիտ չի իրականացվել:

Ստորև գծապատկերում ներկայացված են ՏԻՄ-երում փաստացի իրականացրած աուդիտի տեսակների 2021-2023 թվականների ամփոփ ցուցանիշները.



Այսպիսով, ՊՄ-ներում և ՏԻՄ-երում փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքներն ըստ աուդիտի տեսակների ունեն ստորև ներկայացված պատկերը.



Համաձայն ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանումներից ստացված տարեկան ամփոփ հաշվետվության ուսումնասիրության արդյունքների՝ 2023 թվականին գնման գործընթացի աուդիտ է իրականացվել նաև աուդիտի մնացած տեսակների շրջանակներում՝ ինչպես գնման ընթացակարգերի, այնպես էլ պայմանագրի կատարման մասով, փաստացի ուսումասիրվել է թվով 1767 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 1664 գործառույթ, իսկ ՏԻՄ-երում՝ 103 գործառույթ, որից գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող՝ 222, այդ թվում՝ ՊՄ-ներում 140, իսկ ՏԻՄ-երում՝ 82, գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող՝ 1543 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 1522, իսկ ՏԻՄ-երում՝ 21, պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումներ՝ 2, այդ թվում՝ ՊՄ-ներում՝ 2, իսկ ՏԻՄ-երում չեն ուսումնասիրվել նման գործառույթներ:

2023 թվականին աճել է ներքին աուդիտի կողմից արձանագրված անհամապատասխանությունների քանակը, մասնավորապես, նախորդ տարվա արձանագրված 5109 անհամապատասխանության փոխարեն հաշվետու տարում արձանագրվել է թվով 5854 անհամապատասխանություն, որից ՊՄ-ներում՝ 4790 և ՏԻՄ-

երում 1064՝ ապահովելով 14.6% աճ: Նշված ցուցանիշը 2022 թվականի համեմատությամբ ՊՄ-ներում աճել է 286-ով կամ 6.3%-ով, իսկ ՏԻՄ-երում՝ 459-ով կամ 75.9%-ով: 2023 թվականին նվազել է աուդիտորական առաջադրանքների արդյունքներով արձանագրված և իրավապահ մարմիններին փոխանցված անհամապատասխանությունների քանակը՝ հասնելով 122-ի, նախորդ տարվա 227-ի փոխարեն: Իրավապահ մարմիններին փոխանցված բոլոր 122 խախտումները արձանագրվել են ՊՄ-ներում՝ նախորդ տարվա 106 դեպքի փոխարեն:

Ստորև ներկայացվում է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն[2], ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածով սահմանված ձևաչափի համապատասխան:

[2] Աղյուսակները կազմված են բացառապես ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա՝ ստացված ինչպես կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով ներքին աուդիտն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այնպես էլ ներքին աուդիտի իրականացման աշխատանքները Կազմակերպություններին արտապատվիրակած մարմիններից և համայնքներից:

Լիազոր մարմին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակներ
Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2023թ.	2022թ.	2021թ.
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	3.7	3.5	3.4
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3.8	3.6	3.6

2. Ներքին աուդիտորներ

N	Նկարագիր	2023թ.	2022թ.	2021թ.
1)	Ներքին աուդիտորների թվաքանակը, այդ թվում՝	192*	199*	127*
1.1)	Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը	187	183	111
1.2)	Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը	5	16	16

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2023թ.	2022թ.	2021թ.
1)	Կազմակերպության միավորների քանակ	3443	3239	2915
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	23630	17467	15160
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	953	949	861
4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	8272	6432	5231

* Նշված ցուցանիշը ներառում է ինչպես ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողներին, այնպես էլ կազմակերպությունների աշխատողներին, ովքեր ընդրկված են եղել ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի աշխատանքներում:

* Նշված ցուցանիշը ներառում է ինչպես ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողներին, այնպես էլ կազմակերպությունների աշխատողներին, ովքեր ընդրկված են եղել ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի աշխատանքներում:

5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	943	949	858
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	8100	6248	4904

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	**Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները**	**2023թ.**	**2022թ.**	**2021թ.**
1)	Համակարգի գնահատման աուդիտ	480	401	354
2)	Կատարողականի աուդիտ	53	81	24
3)	Ֆինանսական աուդիտ	83	269	165
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	-	-	-
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	321	302	301
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝	234	209	148
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	48	77	30
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով	30	46	26
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով	18	31	4
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	185	130	47
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով	48	71	19
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով	137	59	28
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	1	2	71
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	1	2	14
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	0	0	57

7)	Խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	60	83	81
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	25	22	12
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	0	2	0
10)	Այլ, այդ թվում՝	6	17	23
11)	Ընդամենը	1262	1386	1108

*Գնումների աուդիտի քանակը ներառում է աուդիտի այլ տեսակների շրջանակում իրականացված գնումների աուդիտը ևս, որն իր մեջ ներառել է գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող և գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտները, ընդ որում ինչպես գնման ընթացակարգի, այնպես էլ պայմանագրի կատարման մասը:

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	2023թ.	2022թ.	2021թ.
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	1046	1047	877
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	977	971	867
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	69	76	10
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	1260	1341	1108
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	1052	1091	1015
2.2)	Խորհրդատվական ծառայությունների քանակ	208	250	93

6. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	2023թ.	2022թ.	2021թ.
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	5854	5109	5422
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	3718	3795	3156

1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	2136	1314	2266
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	4826	4279	4176
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	5497	4569	3407
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	3561	1540	1964
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	123	298	19
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	85	201	8
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	1728	2530	1416
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	4763	4064	4170
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	122	227	100
4.2)	Ինքնուրույն կանխված	4641	3837	4070

Ցանկ N 1

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. ՀՀ Ազգային ժողով
2. ՀՀ սահմանադրական դատարան
3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
4. ՀՀ արտաքին գործերի նախարարություն
5. ՀՀ առողջապահության նախարարություն
6. ՀՀ արդարադատության նախարարություն
7. ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն
8. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
9. ՀՀ պաշտպանության նախարարություն
10. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
11. ՀՀ կադաստրի կոմիտե
12. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե
13. ՀՀ պետական եկամուտների կոմիտե
14. ՀՀ վիճակագրական կոմիտե
15. ՀՀ քաղաքաշինության կոմիտե
16. ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե
17. ՀՀ քննչական կոմիտե
18. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
19. ՀՀ միասնական սոցիալական ծառայություն
20. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
21. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
22. ՀՀ մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
23. ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով
24. ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդ
25. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
26. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
27. ՀՀ գլխավոր դատախազություն
28. ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն
29. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե

Մարզպետարաններ

30. ՀՀ Արագածոտնի մարզպետարան
31. ՀՀ Արարատի մարզպետարան
32. ՀՀ Արմավիրի մարզպետարան
33. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
34. ՀՀ Լոռու մարզպետարան

35. ՀՀ Կոտայքի մարզպետարան
36. ՀՀ Շիրակի մարզպետարան
37. ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
38. ՀՀ Տավուշի մարզպետարան

Ցանկ N 2

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Երևանի քաղաքապետարան
2. Ախուրյանի համայնքապետարան
3. Ամասիայի համայնքապետարան
4. Ապարանի համայնքապետարան
5. Արթիկի համայնքապետարան
6. Բյուրեղավանի համայնքապետարան
7. Թումանյանի համայնքապետարան
8. Կապանի համայնքապետարան
9. Չարենցավանի համայնքապետարան
10. Ջրվեժի համայնքապետարան
11. Վանաձորի համայնքապետարան
12. Տեղի համայնքապետարան